ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019թ. նոյեմբերի 4-ից 8-ը Ժնև (Շվեյցարիայի Համադաշնություն)՝ շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Վարդան Մելիքյանի գործուղման վերաբերյալ

1. **<u>ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ</u>**

   Վարդան Մելիքյան

2. **<u>ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ</u>**

   Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ

3. **<u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ</u>**

   Ժնև (Շվեյցարիայի Համադաշնություն)

   2019թ. նոյեմբերի 4-ից 8-ը

4. **<u>ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ</u>**

   ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողով և Պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունը:

5. **<u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ</u>**

   Մասնակցություն «Forêt 2019»՝ Եվրոպական տնտեսական հանձնաժողովի անտառների ու անտառային արդյունաբերության կոմիտեի և Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության եվրոպական անտառտնտեսության հանձնաժողովի համատեղ նիստին:

6. **<u>ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ, ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐ</u>**

«Forêt 2019»՝ Եվրոպական տնտեսական հանձնաժողովի անտառների ու անտառային արդյունաբերության կոմիտեի և Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության եվրոպական անտառտնտեսության հանձնաժողովի համատեղ նիստն իրականացվեց «Անտառները և շրջանաձև տնտեսությունը» թեմայի շրջանակներում, որի ընթացքում իրականացվեցին պանելային քննարկումներ հետևյալ հարցերի շուրջ.

- «Անտառները և շրջանաձև տնտեսությունը». անտառների վրա հիմնված տնտեսական, սոցիալական և բնապահպանական առավելություններին հասնելու եղանակները, Կայուն զարգացման նպատակների իրականացումը,

- Գլոբալ և տարածաշրջանային քաղաքականության զարգացումները և վերջիններիս ազդեցությունը անտառների տարածաշրջանային օրակարգի վրա,
- Շուկայի վերջին զարգացումները, որոնք հիմնված են «Անտառային ապրանքատեսակների շուկայի տարեկան ակնարկի», ինչպես նաև 2019-2020թթ. կանխատեսումների վրա,
- ինվազիվ տեսակների ազդեցության արդյունքում եվրոպական անտառներում առաջացող վտանգների վերաբերյալ:

«Forêt 2019» համատեղ նիստը տեղի ունեցավ 5-րդ «Եվրոպական անտառների շաբաթվա» հետ միասին: 5-րդ «Եվրոպական անտառների շաբաթը» հնարավորություն ընձեռեց մասնակիցներին ներկայացնելու և վեր հանելու անտառների ներուժը և անտառային արդյունաբերությունը՝ շրջանաձև տնտեսության շրջանակներում:

Շրջանաձև տնտեսությունը, ընդհանուր առմամբ, համարվում է կայուն զարգացման առանցքային օղակ: Վերջինիս նպատակն է տարրերի ու ծառայությունների արդյունավետ օգտագործումը՝ ապահովելով ապրանքի, նյութերի և ռեսուրսների արժեքի երկարժամկետ պահպանությունը տնտեսության մեջ, միևնույն ժամանակ նվազեցնելով թափոնների արտադրությունը:

Մասնակիցներին տեղեկատվություն տրամադրվեց գլոբալ և տարածաշրջանային մակարդակներում քաղաքականության զարգացումների մասին, որոնք կարևոր նշանակություն ունեն Կոմիտեի և Հանձնաժողովի աշխատանքների իրականացման հարցում: Մասնավորապես, տեղեկատվություն տրամադրվեց հետևյալ հարցերի վերաբերյալ.

- ՄԱԿ-ի Անտառների ֆորումի 14-րդ նստաշրջանի և ՄԱԿ-ի անտառների ռազմավարական ծրագրի տարածաշրջանային ներդրումներ,
- Անտառներ և Կայուն զարգացման նպատակներ,
- Տարածաշրջանային գործընթացներ և գործողություններ:

7. <u>ԵՐԿԿՈՂՄ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ</u>

Հանդիպման շրջանակներում երկկողմ հանդիպում եմ ունեցել ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի գլխավոր քարտուղար Օլգա Ալգայերովայի և Շվեյցարիայում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Անդրանիկ Հովհաննիսյանի հետ: Հանդիպման ընթացում քննարկվել են «Անտառային լանդշաֆտների վերականգնման, ինչպես նաև Կովկասում և Կենտրոնական Ասիայում Բոննի մարտահրավերների» իրականացմանն ուղղված հարցեր: Վերոնշյալ հանդիպամն շրջանակներում քննարկվեցին նաև «Ծառեր քաղաքների համար» նախաձեռնությանը Հայաստանի միանալու հետ կապված հարցեր:

8. ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հանդիպման շրջանակներում պատվիրակություններն ընդունեցին ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի, Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության Անտառային Եվրոպա «Ուղեցույցներ անտառների ոլորտում կանաչ աշխատատեղերի խթանման վերաբերյալ» փաստաթուղթը: Մասնակիցներին ներկայացվեց Վարշավայի աշխատանքային գործունեության համապարփակ ծրագիրը, որն իրականացվել է 2019 թվականին, ներառյալ «Անտառի սեփականության տիրույթը ԵՏՀ տարածաշրջանում» ուսումնասիրության հիմնական արդյունքները:

Համաձայն ընթացակարգի և հաստատված պրակտիկայի՝ ընտրվեցին ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի բյուրոյի նախագահ և երեք փոխնախագահներ, որոնք պաշտոնավարելու են մինչև քառասունութերորդ նստաշրջանի ավարտը: Քվեարկության արդյունքում, որպես Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ, ընտրվել եմ հանձնաժողովի բյուրոյի փոխնախագահ:

Հանդիման շրջանակներում ընդունվեց համատեղ նիստի զեկույցը:

Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ

Recoverable Signature

X

ՎԱՐԴԱՆ ՄԵԼԻՔՅԱՆ

Signed by: MELIKYAN VARDAN 1901820505

Վարդան Մելիքյան